

**Ազնուափայլ Տիկին Հրանուշ Յակոբեան  
Հայաստանի Հանրապետության Սփիւռքի նախարար**

Նոր Տարուան եւ Սբ. Ծննդեան ցնծատօներուն առիթով, ընդունեցէք մեր ջերմագին շնորհաւորութիւնները: Ձեզի կը մաղթելք քաջառողջութիւն եւ անսպառ կորով ի խնդիր Ձեր ամանորեան մաղթանքներու իրականացումին եւ ամբողջական յաջողութեան Ձեր ազգանպաստ եւ հայրենանուէր առաջադրանքներուն, որոնք այնքան իմաստուն կերպով ամփոփուած են համայն հայութեան ուղղուած Ձեր Նոր Տարուան եւ Սբ. Ծննդեան շնորհաւորական խօսքին մէջ: Մեր մաղթանքն է որ այդ առաջադրանքները կեանքի ուղեցոյցը ըլլան իւրաքանչիւր հայու, ուր որ ալ գտնուի ան, ուղեցոյց՝ մասնաւորաբար մեր ժողովուրդին տարբեր հատուածները առաջնորդելու կոչուած կազմակերպութիւններուն ու կառոյցներուն, անկախ՝ նախանձախնդիր իւրաքանչիւր հայու մտահոգութեան առարկան հանդիսացող բազմաբնոյթ հարցերէն, վեր՝ ամէն հատուածական նկատառումներէն ու ակնկալութիւններէն, որովհետեւ այդ առաջադրանքներուն իբրեւ ուղեցոյց որդեգրումը անխուսափելի կը դարձնէ մեր ազգին ու հայրենիքին հզօրութեան ու յաղթական գոյերթին գրաւականը հանդիսացող միաբանութիւնը, կը դառնայ գործնական արտայայտութիւնը Հայաստանը իբրեւ համայն Հայութեան հայրենիք ճանաչումին ու անոր շուրջ համախմբումին, հայկական պետականութեան հզօրացման նպաստելու պատրաստակամութեան: Մեր մաղթանքն է որ Սփիւռքի նախարարութիւնը շարունակէ այս զգացումն ու գիտակցութիւնը վառ պահող ձեռնարկներով աշխարհասփիւռ հայութեան հայեացքը սեւեռած պահել իր Մայր Հայրենիքին՝ Հայաստանին վրայ:

Թող 2012 տարին խաղաղաբեր ու բարելիք տարի մը ըլլայ:  
Ամանորեան եւ Սբ. Ծննդեան բարեմաղթանքներով՝

ՍԱՐԳԻՍ ԵՒ ՉՈՒԱՐԹ ՆԱՃԱՐԵԱՆ